ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Ծաղիկյան Ս.Շ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

Պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքներն էական վնաս են հասցնում սոցիալական կարևորագույն այնպիսի արժեքներին, ինչպիսիք են պետության տնտեսությունը, պետական ապարատի և արդարադատության համակարգի նորմալ կենսագործունեությունը, պետական իշխանության հեղինակությունը և այլն: Պաշտոնական լիազորությունների չարաշահումը կամ անցումը, կաշառակերությունը, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը, պաշտոնական կեղծիքը, որոնք պետական ծառայության դեմ ուղղված առավել վտանգավոր և տարածված հանցագործություններն են, հանդիսանում են նաև հանցավոր կոռուպցիայի հիմնական դրսևորումներից: Բացի այդ, պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները պայմաններ են ստեղծում այլ ծանր հանցագործությունների համար, խախտում են սոցիալական արդարությունը, նպաստում են անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը: Քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի գործում, անկասկած, առաջնային նշանակություն ունեն դրանց կանխմանն ուղղված սոցիալ-տնտեսական, կազմակերպակառավարչական, քաղաքական, իրավական, գաղափարախոսական բնույթի միջոցառումները: Այս առումով չի կարելի թերագնահատել նաև քրեաիրավական պայքարի նշանակությունը:

Պետական իշխանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության շահերի դեմ ուղղված առավել տարածված և վտանգավոր հանցագործություններից են պաշտոնական լիազորությունների չարաշահումը և անցումը, կաշառք ստանալը, տալն ու կաշառքի միջնորդությունը:

Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ վերջին տասը տարիներին նկատվում է դրանց թվի կայուն աճ: Բացի այդ, նշված հանցավոր արարքների տեսակարար կշիռը պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում բավականին մեծ է:

Հարկ է նշել նաև, որ հայաստանյան իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատական, դատախազական և քննչական

մարմինների ներկայացուցիչները որոշակի բարդություններ են ունենում պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները բացահայտելու առումով:

Նմանատիպ հարցերի քննարկմանն է կոչված սույն դասընթացը, որի յուրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դասընթացին վերաբերող պարտադիր և լրացուցիչ գրականությունը:

2.Դասընթացի նպատակը և խնդիրը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի հետ, ինչպես նաև նպաստել ուսանողների մոտ կրիմինալիստիկական գիտելիքների ձևավորմանը:

Կրթական դասընթացի հիմնական խնդիրն է ուսանողներին ծանոթացնել նախ կրիմինալիստիկայի մեթոդիկային, այնուհետև կոնկրետ պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի հետ:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

Իմանան՝

- պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Կարողանան՝

- իրականացնել պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների քննություն:

Ունակ լինեն՝

- հսկողություն իրականացնել պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	72		72				
1.1. Լսարանային պարապմունքներ:	18		18				
1.1.1.Դասախոսություններ	10		10				
1.1.2.Սեմինարներ	8		8				
1.2. Ինքնուրույն աշխատանք	54		54				
Եզրափակիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Քննություն		Քննություն				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1.1. Պաշտոնական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:	24	2		6
Թեմա 1.2. Պաշտոնական լիազորություններն անցնելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:				8
Թեմա 1.3. Կաշառք ստանալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:				8

Թեմա 1.4. Կաշառք տալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 1.5. Կաշառքի միջնորդության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 1.6. Պաշտոնեական կեղծիքի վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 1.7. Պաշտոնեական անփութության վերաբերյալ գործերի	**12**	**2**	**2**	**8**
Ընդամենը	**72**	**10**	**8**	**54**

3.Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1.1. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները

Պաշտոնեական դիրքի չարաշահման քրեագիտական բնութագիրը. Հանցագործության կատարման մասին քրեագիտական նշանակություն ունեցող տեղեկատվության աղբյուրները: Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու գործերով բացահայտման ենթակա հանգամանքների առանձնահատկությունները:

Հատուկ իրավական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ քրեական գործեր հարուցելու և քննելու հատուկ կարգը: Քննության սկզբնական փուլի առանձնահատկությունները: Քննության հետագա փուլի առանձնահատկությունները: Այն փաստաթղթերի զննումն ու առգրավումը, որոնց մեջ արտացոլվել են պաշտոնատար անձի ոչ իրավաչափ գործողությունները:

Թեմա 1.2. Պաշտոնական լիազորություններն անցնելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Քրեական գործ հարուցելու փուլում պաշտոնական լիազորություններն անցնելու քննության կազմակերպման առանձնահատկությունները: Պաշտոնական լիազորություններն անցնելու քրեական գործի քննության ժամանակ անհետաձգելի նախնական քննչական գործողությունների տակտիկա: Պաշտոնական լիազորություններն անցնելու գործերով բացահայտման ենթակա հանգամանքների առանձնահատկությունները:

Թեմա 1.3. Կաշառք ստանալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Կաշառք ստանալու քրեագիտական բնութագիրը: Կաշառք ստանալու քննության առանձնահատկությունները իրավապահ մարմիններում: Կրթական հաստատություններում կաշառք ստանալու քննության առանձնահատկությունները: Կաշառք ստանալու վերաբերյալ քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները: Կաշառք ստանալը քննելիս անհետաձգելի նախնական քննչական գործողությունների տակտիկա: Կաշառք ստանալու վերաբերյալ հաղորդումների ստուգման առանձնահատկությունները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները՝ որպես կաշառք ստանալու հետաքննության մեթոդիկայի աղբյուրներ:

Թեմա 1.4. Կաշառք տալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Կաշառք տալու քրեագիտական բնութագիրը: Կաշառք տալու քննության առանձնահատկությունները իրավապահ մարմիններում: Կաշառք տալու վերաբերյալ քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները: Կաշառք տալը քննելիս անհետաձգելի նախնական քննչական գործողությունների տակտիկա: Կաշառք տալու վերաբերյալ հաղորդումների ստուգման առանձնահատկությունները: Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի որոշումները՝ որպես կաշառք տալու հետաքննության մեթոդիկայի աղբյուրներ:

Թեմա 1.5. Կաշառքի միջնորդության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Կաշառքի միջնորդության քրեագիտական բնութագիրը և առանձնահատկությունները: Կաշառքի միջնորդության հետաքննության մեթոդիկայի հասկացությունը և սկզբունքները: Կաշառքի միջնորդության քննության ժամանակ բացահայտման և ապացուցման ենթակա հանգամանքները: Կաշառակերության միջնորդության տիպիկ եղանակները: Կաշառքի միջնորդության քննության նախնական փուլի առանձնահատկությունները: Նախնական քննչական իրավիճակները, վարկածները: Քննության հիմնական ուղղությունները և անհետաձգելի քննչական գործողությունները:

Թեմա 1.6. Պաշտոնեական կեղծիքի վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Պաշտոնեական կեղծիքի գործերով առավել բնորոշ նախնական քննչական գործողությունները՝ փաստաթղթերի զննումը և առգրավումը, դեպքի վայրի զննումը, արտադրանքի և նյութերի նմուշների զննումն ու առգրավումը (որոնց վնասման, ոչ պատշաճ, պահպանման և ապօրինի իրացման վերաբերյալ կատարվում է հետաքննություն), վկաների և կասկածյալների հարցաքննությունները: Պաշտոնեական կեղծիքը քննելիս հանցագործության վայրը և ժամանակը ու դրա հետևանքները պարզելը: Ֆիզիկական, իրավաբանական անձանց, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի էական խախտման փաստերի բացահայտումը:

Թեմա 1.7. Պաշտոնեական անփութության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Պաշտոնեական անփութության քրեաիրավական և քրեագիտական բնութագիրը, դասակարգումը և տարրերը: Պաշտոնեական անփութության քննության ժամանակ բացահայտման ենթակա հանգամանքները: Ապացույցների հավաքման և հետազոտման խնդիրները: Նախնական քննչական գործողությունները ծառայողական անփութությունը քննելիս: Հիմնական խնդիրները, որոնք պետք է լուծվեն պաշտոնեական անփութության հետաքննության ժամանակ՝ նյութական վնաս հասցնելու փաստի հաստատումը և դրա չափի որոշումը; այն պաշտոնատար անձանց հայտնաբերումը, որոնց անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ հանգեցրել է խոշոր վնաս պատճառելուն և այլն:

4. Տեսական բլոկ

Գրականության ցանկ (պարտադիր և լրացուցիչ)

Պարտադիր գրականություն

1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից *1 հուլիսի 1998 թ.*
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 *թ.*
4. Առաքելյան Ս. Վ.,Խաչիկյան Տ. Ա.,Ամիրյան Գ. Ս.,Ղազարյան Տ. Ս., Նահապետյան Ա. Ս. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները | Ուս. ձեռնարկ: Տիգրան Մեծ, 2015թ., 128 էջ
5. Ենգիբարյան Վ.Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Եր.: ԵՊՀ հրատ., 2014:

6. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
7. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
8. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2009: Հ. 1:
9. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
10. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
11. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
12. Ավետիսյան Դ., Վարդապետյան Ա. Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013-2015 թթ. նախադեպային իրավունքի վերլուծություն) | Գիտական աշխատությունների ժողովածու, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջ 412-423
13. Алтухов С.А. Криминологическая характеристика и профилактика преступлений, совершаемых сотрудниками милиции. Автореф. дис… канд. юрид. наук. Ростов н/Д, 2000.
14. Борков В.Н. Получение взятки: вопросы квалификации: Диссерт... канд. юрид. наук. Омск, 2002.
15. Бриллиантов А.В. К вопросу о понятии должностного лица // Российский следователь, 2001, № 6.

16. Вейберт С.И. Взяточничество: проблемы квалификации и назначения наказания: Автореф. дис..канд. юрид. наук. Челябинск, 2007.
17. Волженкин Б.В. Квалификация посредничества во взяточничестве // Правоведение, 1979, № 4.

Լրացուցիչ գրականություն

1. Гаухман Л.Д. Законодательное обеспечение борьбы с коррупцией // Журнал российского права, 2000, № 12.
2. Гончарова Г. К вопросу о значении понятия существенного вреда по делам о преступлениях против интересов службы // Законность и правопорядок, № 3(19), 2011.
3. Горелик А.С. Конкуренция уголовно-правовых норм. Красноярск, 1998.
4. Грошев А.В. Функции правосознания в механизме уголовно-правового регулирования: Автореф. дис. д-ра юрид.наук. Екатеринбург, 1997.
5. Доиджашвили Д. Объективная сторона превышения власти или служебных полномочий // Советская юстиция, 1989, № 22.
6. Дорохов В.Я. Понятие документа в советском праве//Правоведение, 1982, № 2.
7. Егорова Н.А., Икрянникова А.С. Уголовная ответственность за посредничество во взяточничестве // Вестник Волгоградской академии МВД России, 2011, № 4(19).

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքրերի փոխանակում կոնկրետ առաջադրված իրավական հարցերի և խնդիրների վերաբերյալ: Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, բարեկիրթ վերաբերմունք խմբի անդամների հետ:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում: Գնահատման չափանիշ՝ պլանի առկայություն, օգտագործված գրականության ցանկ, հղումների ճշգրտությունը, պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6. Պրակտիկ բլոկ

Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը: բանավոր հարցում:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը:

Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորում են կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,

- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններն՝ ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: